Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«14» հունիսի 2022 թ.

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

ԿԱՐԾԻՔ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Աբու Զահդ Ալի Մուսայի «ՆԵՐՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատված է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի 2022թ. հունիսի 14-ի նիստում: Նիստին մասնակցում էին բ.գ.թ., դոցենտ Ռ.Գ.Էլամիրյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Կ.Կարապետյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Մելիքյանը, պ.գ.թ., դոցենտ Գ.Գ.Գևորգյանը, բ.գ.թ., դոցենտ Ն.Վ.Գևորգյանը:

Իսրայելա-պաղեստինյան դիմակայության և դրա շուրջ ձևավորված աշխարհաքաղաքան, ռազմաքաղաքական և ներքաղաքական զարգացումների ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական և գործնական կարևոր նշանակություն և արդիականություն:

Թեմայի հետազոտությունը մեծապես նպաստում է իսրայելա-պաղեստինյան խնդիրների վերաբերյալ առկա ներպաղեստինյան մոտեցումների, ինչպես նաև տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումներին առնչվող մի շարք իրողությունների ճիշտ ընկալմանն ու լուսաբանմանը: Պաղեստինյան թնջուկը և արաբ-իսրայելական հարաբերությունները առհասարակ շատ հաճախ

տարածաշրջանի բարդ աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական իրողությունների ձևավորող գործոններից են: Միևնույն ժամանակ թե պաղեստինյան հարցի կարգավորման գործընթացը և թե արաբ-իսրայելական հակամարտությունը պատմական տարբեր ժամակաշրջաններում ներազդել են նաև համաշխարհային քաղաքականության վրա և երբեմն պայմանավորել են միջազգային հարաբերություններում ճգնաժամային իրողությունների ի հայտ գալը:

Հարկավոր է արձանագրել նաև, որ եթե արաբ-իսրայելական հակամարտությունը ժամանակի ընթացքում հետզհետե վերաճեց ավելի շատ դիմակայության՝ այսինքն ակտիվ գլոբալ ռազմական բախմանը հաջորդեց առավելապես քաղաքական պայքարը, որը պայմանավորվեց 1979 թ. եգիպտա-իսրայելական, իսկ 1994 թ. նաև հորդանանա-իսրայելական հաշտության պայմանագրերի ստորագրմամբ, ապա պաղեստինյան հարցի կարգավորման գործընթացը մինչ օրս պարբերաբար ուղեկցվում է դեռ ռազմական առճակատման դրսևորումներով: Այս առումով չափազանց էական է բացահայտել և հասկանալ իսրայելա-պաղեստինյան հարաբերությունների, պաղեստինյան հարցի կարգավորման գործընթացի վերաբերյալ նաև բուն ներպաղեստինյան քաղաքական խոսույթը: Պաղեստինյան ամենաազդեցիկ քաղաքական կազմակերպությունների և կառույցների, ինչպես նաև պաղեստինյան հանրության դիրքորոշումը Իսրայելի հետ հարաբերությունների, Պաղեստինյան ինքնավարությունից դեպի իրավական առումով անկախ պետականություն անցնելու հարցի առնչությամբ:

Տևական ժամանակ Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՊԱԿ) Իսրայելի հետ պաղեստինյան հարցի կարգավորման գործընթացին ուներ իր ուրույն մասնակցությունը, թեպետև Իսրայելը այն ճանաչեց միայն 1991 թ.՝ այսպես կոչված մադրիդյան գործընթացում, սակայն պաղեստինա-իսրայելական հարաբերությունները ավելի բարդացան, երբ քաղաքական պայքարի մեջ մտավ 1980-ականների վերջին ստեղծված Իսլամական դիմադրության շարժումը (ՀԱՄԱՍ): Դրան զուգընթաց Հորդանան գետի Արևմտյան ափին և Գազայի գոտում քաղաքական-գաղափարական և սոցիալ-տնտեսական զարգացումները երկբևեռ իրողություն ստեղծեցին, որի արդյունքում պաղեստինյան հարցի կարգավորման ներպաղեստինյան օրակարգը այլևս ուներ երկու ներկայացուցիչ՝ ի դեմս ՊԱԿ-ի և ՀԱՄԱՍ-ի:

Աշխատանքի ժամանակագրական սահմանները ըստ էության ընդգրկում են 1950-ականների կեսից մինչև 2017 թ.: Պաղեստինյան հարցի կարգավորման պատմական այս ժամանակաշրջանը մաս է կազմում միջազգային հարաբերությունների երկբևեռ համակարգի, և բնականաբար ունի նաև իրեն բնորոշ առանձնահատկությունները: Այնուհետև սկսվում է «սառը պատերազմի» ավարտի ժամանակաշրջանը, որը բավականին բարդ իրողություններ է ստեղծում թե արաբ-իսրայելական դիմակայության և թե պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորման գործընթացի համար. որոշակի փոփոխություն է ստանում նաև Իսրայելի հետ հարաբերությունների պաղեստինյան օրակարգը, որի առավել վառ արտացոլումն է

1991 թ. մեկնարկած մադրիդյան խաղաղության կոնֆերանսը, իսկ այնուհետև «Օսլո գործընթացը»: Պաղեստինյան հարցի կարգավորման գործընթացի համար նոր փորձություն կարելի է համարել ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի կողմից Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու քաղաքական քայլը: Այն միևնույն ժամանակ թե Պաղեստինում և թե Իսրայելում քաղաքական նոր խոսույթի և քննավեճի հիմք հանդիսացավ:

Աշխատանքի շրջանակներում առաջին անգամ փորձ է արվել ամբողջական կերպով ուսումնասիրել և գիտական շրջանառության մեջ դնել իսրայելա-պաղեստինյան խնդիրների նկատմամբ ներպաղեստինյան քննարկումները, առավել խնդրահարույց հարցերի վերաբերյալ դիրքորոշումը և այլն: Մյուս կողմից, ատենախոսության շրջանակներում քննարկվում է ՊԱԿ-ի և ՀԱՄԱՍ-ի միջև հարաբերությունները, քաղաքական կնճիռները և դրանք հաղթահարելու ուղիները:

Աշխատանքի դրական կողմերից է ատենախոսության աղբյուրագիտական հենքը՝ արխիվային արաբալեզու հարուստ նյութը, մամուլը, նաև՝ արաբալեզու մասնագիտական գրականությունը, ինչպես նաև ատենախոսի կողմից քննարկվող հարցի առնչությամբ կատարված դաշտային հետազոտական աշխատանքը պաղեստինցի արաբների շրջանում: Ատենախոսության մեջ ներկայացված հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները, ընդհանուր առմամբ, կարող են օգտագործվել արաբական երկների և նաև մասամբ Իսրայելի արդի շրջանի պատմությանը նվիրված դասընթացներում, դասագրքերում և ամենատարբեր ուսումնասիրություններում:

Ատենախոսը՝ Աբու Զահիդը, իր աշխատանքում հանգամանորեն հետազոտել է «ՖԱԹՀ»-ի, «ՊԱԿ»-ի և «ՀԱՄԱՍ»-ի ստեղծման նպատակներն ու խնդիրները, ներկայացրել Պաղեստինյան հարցի կարգավորման գործընթացի վերաբերյալ ներպաղեստինյան դիրքորոշման հիմնական ուղղությունները, բացահայտել «ՀԱՄԱՍ» և «ՖԱԹՀ» շարժումների առաջացման և զարգացման հանգամանքները, դրանց քաղաքական հետևաբեմը և այդ ամենի ազդեցությունը պաղեստինյան իրականության մեջ, ի ցույց դրել Օսլոյից հետո, խաղաղության գործընթացի վերաբերյալ պաղեստինյան կողմերի դիրքորոշումները, դրանց վերջին զարգացումները և հետևանքները: Կարևոր է, որ ատենախոսը ներկայացրել է իսրայելաբնակ արաբների դիրքորոշումը պաղեստինյան հարցի կարգավորման գործընթացի վերաբերյալ: Ուսումնասիրության շրջանակներում վերլուծության են ենթարկվել նաև ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի Իսրայելում ամերիկյան դեսպանությունը Թել-Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու վերաբերյալ որոշումը, այդ որոշման նկատմամբ ներպաղեստինյան, պաղեստինյան, արաբական և միջազգային արձագանքները:

Ատենախոսությունը, սակայն, զերծ չէ նաև որոշ բացթողումներից և թերություններից: Նախ պետք է նշել, որ աշխատանքի առանձին հատվածներ շտկման և խմբագրման կարիք ունեն:

1. Մասնավորապես էջ 6-ում՝ աշխատանքի նորույթը հատվածում հեղինակը նշում է, որ առաջին անգամ անդրադարձ է կատարվում նաև Օսլոյի համաձայնագրի մանրամասներին ու հետևանքներին ամբողջ պաղեստինյան ժողովրդի վրա՝ ներառյալ սփյուռքը, նրա դիրքորոշմանը և պաղեստինյան դաշտում քաղաքական ճգնաժամից դուրս գալու լուծումների որոնմանը: Այս հարցադրման մի շարք առանցքային դրույթներ արդեն իսկ մանրամասնորեն ներկայացված են Աբու Մազենի «Путь в Осло» աշխատանքում, որի ռուսալեզու տարբերակը առկա է նաև համացանում:

2. Էջ 7-ում՝ աշխատանքի ժամանակագրական սահմանները հատվածում, հեղինակը նշում է, որ աշխատանքի ժամանակագրական շրջանակը հիմնականում ընդգրկում է 1993 թ. Օսլոյի համաձայնագրի ստորագրումից մինչև 2017 թ.-ին Դոնալդ Թրամփի՝ Երուսաղեմը որպես Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ դեսպանատունը Թել-Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու վերաբերյալ որոշման անմիջապես հաջորդած ժամանակահատվածը, մինչդեռ սույն ատենախոսության առնվազն առաջին գլուխը սկսվում է 1940-50 ականներից: Այս առումով աշխատանքը ավելի կշահեր, եթե հեղինակը ներածության հատվածում հիմնավորեր ատենախոսության ժամանակագրական շրջանակները՝ դիտարկելով նաև իր առջև դրված քննարկվող խնդրի համակարգված ներկայացման հնարավորությունը նշված ժամանակագրական շրջանակներում:

3. Ցանկալի կլիներ, եթե հեղինակը աշխատանքի առաջին գլխում ավելի հանգամանալից անդրադառնար ՖԱԹՀ-ի և ՊԱԿ-ի ստեղծման պատմաքաղաքական պատճառներին՝ ի ցույց դնելով նաև արաբական որոշ երկրների դիրքորոշումը տվյալ իրողությունների հարցում: Հարկ է նշել, որ տվյալ հարցը նաև բազմակողմանի ուսումնասիրված է ոլորտի մասնագիտական շրջանակների կողմից:

4. Աշխատանքը մեծապես կշահեր, եթե հեղինակը ավելի ընդգրկուն դարձներ անգլալեզու գրականության ցանկը, հաշվի առնելով մերձավորարևելյան տարածաշրջանի խնդիրների վերաբերյալ տարեկան հրատարակվող գիտական նյութերի վիճակագրությունը:

5. Ատենախոսության գրականության ցանկը ցանկալի կլիներ համալրել նաև ռուսալեզու որոշակի աղբյուրներով և ժամանակաշրջանին վերաբերող տարբեր գիտական նյութերով՝ մանավանդ, երբ հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ աշխատանքի ժամանակագրության մի ստվար հատվածը բաժին է ընկնում «սառը պատերազմի» ժամանակաշրջանին:

6. Շահեկան կլիներ նաև, եթե հեղինակն աշխատանքի չորրորդ գլխում անդրադառնար ոչ միայն Երուսաղեմ քաղաքի հարցում ԱՄՆ նախագահների դիրքորոշումներին, այնուհետև նաև Դ. Թրամփի, այլև այդ ամենը ներկայցներ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության հայեցակարգի և դրա ուղեգծի փոփոխման համատեքստում:

Նշված թերությունները սակայն չեն ստվերում աշխատանքի կարևոր նշանակությունը: Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով:

Հեղինակը հանդես է բերել ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակություն, իսկ ատենախոսության հիմքում ընկած արխիվային և փաստական նյութը մեծապես նպաստել է հետազոտվող հիմնախնդիրների բազմակողմանի ուսումնասիրությանը:

Ատենախոսության մեջ քննարկվող հիմնախնդիրներն ու դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած թվով 7 գիտական հոդվածներում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում: Սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Որոշեցին՝ Աբու Զայիդ Ալի Մուսայի «Ներպաղեստինյան քննարկումներն ու հակասությունները իսրայելա-պաղեստինյան դիսկուրսի համատեքստում» ատենախոսությունը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
համաշխարհային քաղաքականության
և միջազգային հարաբերությունների ամբիոնի
վարիչի ժ.պ., բ.գ.թ., դոցենտ — Ռ.Գ.Էլամիրյան

Ամբիոնի քարտուղար — Ա.Ա. Արամյան

Հաստատում եմ՝

Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարանի գիտական
քարտուղար, բ.գ.թ. — Ռ.Ս.Կասաբաբովա